ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 29.01.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/04

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի 29.12.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման Խորհրդին 29.12.2017թ. ներկայացրել է բողոք, որը կազմված է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ:

Խորհուրդը՝ հիմք ընդունելով Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, վերադարձրել է «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. ներկայացրած բողոքը՝ արձանագրված անհամապատասխանությունները երկու աշխատանքային օրվա ընթացքում շտկելու և Խորհուրդ ներկայացնելու համար:

Ընկերությունը 11.01.2018թ. Խորհրդին է ներկայացրել բողոքի շտկված տարբերակը, որով հայտնել է հետևյալը.

««ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար «Աուդիտորական ծառայության» ձեռքբերման նպատակով ս.թ. դեկտեմբերի 11-ին ներկայացված ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/29 ծածկագրով անցկացվող գնանշման հարցման հայտարարությանը և ի լրումն վերջինիս ներկայացված հրավերին (այսուհետ՝ Հրավեր) համապատասխան՝ նշված ծածկագրով

մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել թվով 4 ընկերություններ: Հանձնաժողովի արձանագրության 1.2 կետի համաձայն՝ նշված մրցույթում առաջին տեղն զբաղեցրած մասնակցին խնդրանք է առաջադրվել՝ նույն կետով սահմանված ժամկետում Հանձնաժողովին ներկայացնել որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ Հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի 22.12.2017թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ նշված մրցույթում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, որոնցում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Ս.թ. դեկտեմբերի 27-ին ժամը 09:33-ին ՀՀ գնումների համակարգի www.gnumner.am կայքում հրապարակվել է ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/29 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Խորհրդի հատուկ ուշադրությունն ենք հրավիրում Հրավերի Հավելված 6-ում ներկայացված ԵՊՀ կարիքների համար աուդիտորական ծառայության մատուցման գնման պայմանագրի նախագծի թիվ 1 Հավելվածով նախատեսված «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի վերջին մասում մասնակցի նկատմամբ ներկայացված պահանջներին, մասնավորապես՝ մասնակցի 10 տարի ընդհանուր, ինչպես նաև 5 տարվա ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում և ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում աշխատանքային փորձի առկայության պահանջներին:

Տվյալ դեպքում ընթացակարգին նվազագույն գնային առաջարկ ներկայացրած և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ն (ՀՀՎՎ՝ 02618043), ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստրի տվյալների համաձայն՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց ռեգիստրի գործակալությունում գրանցվել է 2013թ., ինչը վկայում է այն մասին, որ տվյալ մասնակիցը չէր կարող ապահովել Հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի վերը նշված պահանջը, բացի այդ՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ն աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիան (ԱԾ 097) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացել է 2014թ. հունվարի 10-ին, այսինքն, մասնագիտական գործունեության ընդհանուր տևողությունը 5 տարի չի կազմում:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ Հանձնաժողովի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերը»:

Հիմք ընդունել վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 34-րդ, 46-րդ, 50-րդ հոդվածներով՝ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Փոփոխել Հանձնաժողովի՝ ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/29 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ Հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ 22.12.2017թ. որոշումը, ինչպես նաև ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/29 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել Հանձնաժողովի ընդունել համապատասխան որոշում՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջով:

Հաշվի առնելով, որ Բողոքը ներկայացնելու դրությամբ (29.12.2017թ.) ընկերությունը տեղյակ չի եղել «ԵՊՀ» հիմնադրամի և «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի միջև ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/29 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 08.01.208թ. կնքված պայմանագրի վերաբերյալ, ուստի Բողոքի քննության նպատակով Խորհրդում 24.01.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի տնօրենի կողմից Բողոքի պահանջը լրացվեց հետևյալ բովանդակությամբ՝ չեղյալ հայտարարել կնքված պայմանագիրը:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Գոռ Դավթյանը և լիազորված ներկայացուցիչ Անի Մուրադյանը:

2. <u>«ԵՊՀ» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«ԵՊՀ» հիմնադրամը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 16.01.2018թ. էլեկտրոնային գրությամբ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

««ԵՊՀ» Հիմնադրամի «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժովը հայտերի գնահատումը իրականացրել է ՀՀ «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան, և «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/04 բողոքը համարում է անհիմն:

Համաձայն 526-Ն որոշման 32-րդ կետի՝ հրավերով նախատեսվում է.

1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. Իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. Գնային առաջարկ,

դ. Հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած, ապա սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է դրա բնօրինակը,

ե. Հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը,

զ. Ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ցանկանում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել հետևյալ փաստի վրա. մասնակիցներից, ի տարբերություն ապրանքների գնման, ծառայությունների և աշխատանքների պարագայում, հրավերով չի պահանջվում ներկայացնել տեխնիկական բնութագիր, մասնակիցը հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է դիմում՝ հավելված 5՝ հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի վերաբերյալ, իսկ ապրանքների պարագայում՝ նաև առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

46. Սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդորում,

ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Այսինքն, մասնակցից տեխնիկական բնութագրի պահանջը համարվում է գործող օրենքի և կիրառման կարգի խախտում և հրավերի պահանջների շրջանցում, եթե տվյալ մասնակիցը կեղծ փաստաթղթեր չի ներկայացրել և լրացուցից ճշգրտումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացրել պատվիրատուի մոտ, ինպես նաև հրավերի պայմաններով մասնակիցներին ոչ գնային առաջարկ (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), ներկայացնեու պահանջ սահմանված չի եղել, որը, ինպես գիտենք, նախորոք սահմանվում է հրավերով:

Այսպիսով, հայտերը գնահատվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի բոլոր կետերին համապատասխան:

Հոդված 34. Հայտերի գնահատումը.

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Ալլա Մակարյանը:

3. <u>«Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ԳԲԽ-ԷՍ-2018/04 բողոքի քննության շրջանակներում որպես երրորդ անձ ներգրավված «Ասատրյանս» ՍՊԸ-ն 26.01.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հոտևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. ներկայացված բողոքը, որով վիճարկվում է «ԵՊՀ» Հիմնադրամի կողմից կազմակերպված «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի շրջանակներում «Ասատրյանս» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը հրավերի պահանջներին չբավարարելու հիմքով վերջինիս հայտը մերժելու հարցը:

Վերոգրյալի հետ կապված հայտնում ենք, որ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ասատրյանս» ՍՊԸ-ն, որին 18.12.2017թ.-ի թիվ 2 արձանագրության 1.2 կետով առաջարկվել է նույն կետով սահմանված ժամկետում հանձնաժողովին ներակայացնել որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ Հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի 22.12.2017թ.-ի թիվ 3 արձանագրությամբ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

«ԵՊՀ» Հիմնադրամի կողմից կազմակերպված «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հրավերի երկրորդ բաժնի 2.4. կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

2.5 Մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկպայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում աուդիտորական ծառայությունների մատուցված լինելը:

բ. Սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և

դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստողակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները...:

4) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝ մասնագետների որակավորումը, աշխատանքային փորձը, ժամանակահատվածը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը:

Ընդ որում, մասնագետների որակավորումը սյունակում նշված է. Միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորված աուդիտներ:

Աշխատանքային փորձի ժամանակահատվածը՝ վերջին 5 տարվա մեջ նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ նշված որակավորմամբ: Մասնակից կազմակերպության կազմում աշխատանքային փորձը՝ նվազագույնը 3 տարի:

Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցում:

Այսպիսով, մրցույթի հրավերի 2-րդ բաժնում, որը նվիրված է հենց որակավորման չափանիշների սահմանմանը, հստակ սահմանվում են մասնակցության այն որակավորման չափանիշները, որոնք մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար:

«Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից ուղղակիորեն երևում է, որ դրանք համապատասխանում են հրավերի 2-րդ բաժնով սահմանված և պահանջված մասնակցության որակավորման չափանիշներին, տվյալ դեպքում մասնագիտական փորձառությանը և աշխատանքային ռեսուրսին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնհատվում են անբավարար և մերժվում են:

Վերոհիշյալ վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն համապատասխանում է հրավերով (2-րդ բաժին) սահմանված որակավորման չափանիշներին: Ուստի, մրցույթի գնահատող հանձնաժողովը, հաղթող մասնակից ճանաչելով «Ասատրյանս» ՍՊԸ-ին, գործել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ մասնակցի 10 տարվա աշխատանքային փորձի մասին հիշատակվում է ոչ թե հրավերով սահմանված որակավորման չափանիշների շարքում, այլ ընդամենը Հավելված 6-ով սահմանված պայմանագրի տիպային օրինակի Հավելված 1-ում, որտեղ աշխատանքների կատարման տեխնիկական բնութագիրն է ներկայացվում, ընդ որում այդ փաստաթղթում (Հավելված 6-ում) չի կարող պարունակվել աշխատանքային ռեսուրսի վերաբերյալ պահանջ, այլ միայն աշխատանքի բնույթի նկարագրություն:

Միևնույն ժամանակ, ինչպես հայտնի է, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները կարող են բողոքարկվել ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ՝ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը: Մինչդեռ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ն ժամանակին չօգտվելով բողոքարկման այս հնարավորությունից և նշված մրցույթում չգրավելով առաջին տեղ, միայն դրանից հետո է բարցրաձայնել ստեղծված իրավիճակը:

Ի հավելումն նշենք, որ «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» գնման ընթացագարգին մասնակցել են թվով 4 կազմակերպություններ, որոնցից «Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացրած գինը ամենացածրն է եղել և այն մոտ 2.5 անգամ ավելի ցածր է նախկին Աուդիտորի աշխատանքների իրականացման գնից:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքում հստակ նշված չեն պահանջները: Մասնավորապես, ընդամենը պահանջվում է փոփոխել գնահատող հանձնաժողովի որոշումները և պարտավորեցնել ընդունել որոշում, սակայն ըստ բողոքաբերի, ինչպես պետք է փոփոխվեն որոշումները կամ ինչ որոշում պետք է ընդունի

պատվիրատուն, անհայտ է, ուստի նման անորոշ պահանջով բողոքը չի կարող բավարարվել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր «Ասատրյանս» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Լիլիթ Ազիզյանը:

4. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 18.12.2017թ. ժամը 10:00-ի հայտերի բացման նիստի N 2 և 22.12.2017թ. ժամը 10:00-ի հայտերի բացման նիստի N 3 արձանագրությունները, «Ասատրյանս» ՍՊԸ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, «ԵՊՀ» հիմնադրամի և «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի միջև 08.01.208թ. կնքված «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» ծածկագրով պայմանագիրը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

«ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար՝ աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվ այլ մասնակիցների մասնակցության հայտ են ներկայացրել «Աուդիտ Սերվիս» և «Ասատրյանս» ՍՊԸ-ները:

«ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հրավերի գնման պայմանագրի նախագծի թիվ 1 Հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրով, ի թիվս այլ պահանջների, սահմանվել է հետևյալ պահանջը՝

Մասնակիցը պետք է ապահովի՝

1. Մասնագիտական հատկանիշներ (աշխատանքային փորձ)

- Մասնակցի ընդհանուր աշխատանքային փորձ - 10 տարի
- Աշխատանքային փորձը ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում -5 տարի
- Աշխատանքային փորձը ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում - 5 տարի

2. Աշխատանքային ռեսուրսներ (առաջադրանքի կատարման համար առաջարկվող աշխատակազմ)

- Անձնակազմի ընդհանուր փորձառությունը-10 տարի

• Անձնակազմի փորձառությունը ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում-5 տարի

• Անձնակազմի որակավորումը ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում-5 տարի(...):

Հանձնաժողովը՝ 18.12.2017թ. ժամը 10:00-ի հայտերի բացման նիստի N 2 արձանագրության՝

• 1.1 կետով արձանագրել է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված գնային առաջարկը կազմել է 4,400,000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) և որոշել է վերջինիս ճանաչել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

• 1.2 կետով որոշել է «Ասատրյանս» ՍՊԸ-ից պահանջել ներկայացնել որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ Հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովը՝ 22.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի N 3 արձանագրության՝

• 1.2 կետով արձանագրել է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ Հրավերով նախատեսված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

• 2-րդ կետով որոշել է ընտրված մասնակից ճանաչել «Ասատրյանս» ՍՊԸ-ին:

«ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով Պատվիրատուն 27.12.2017թ. տեղեկագրում հրապարակել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն «Ասատրյանս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընթացակարգի ընտրված մասնակից:

«ԵՊՀ» հիմնադրամի և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 08.01.208թ. կնքվել է «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» ծածկագրով աուդիտորկան ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը, որի թիվ 1 Հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով կողմերի միջև ամրագրվել են հետևյալ պայմանները՝

Մասնակիցը պետք է ապահովի՝

1. Մասնագիտական հատկանիշներ (աշխատանքային փորձ)

• Մասնակցի ընդհանուր աշխատանքային փորձ – առնվազն 3 տարի

• Աշխատանքային փորձը ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում -5 տարի

• Աշխատանքային փորձը ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում - 5 տարի

2. Աշխատանքային ռեսուրսներ (առաջադրանքի կատարման համար առաջարկվող աշխատակազմ)

• Անձնակազմի ընդհանուր փորձառությունը- առնվազն 3 տարի

• Անձնակազմի փորձառությունը ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում-3 տարի

• Անձնակազմի որակավորումը ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում-3 տարի(...):

Բողոքի քննության նպատակով 16.01.2018թ. Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց Բողոքն ամբողջությամբ և հայտնեց, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ին Ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչելու մասին Հանձնաժողովի որոշումը ընդունվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ: Վերջինս իր դիրքորոշումը հիմնավորեց այն փաստով, որ ԵՊՀ կարիքների համար աուդիտորական ծառայության մատուցման Հրավերի գնման պայմանագրի նախագծի թիվ 1 Հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրով պահանջվել է մասնակցի 10 տարի ընդհանուր, ինչպես նաև 5 տարվա ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում և ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում աշխատանքային փորձի առկայության, մինչդեռ Ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչված «Ասատրյանս» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց ռեգիստրի գործակալությունում գրանցվել է միայն 2013թ., այսինքն, վերջինս չէր կարող ապահովել վերը նշված պահանջի կատարումը: Բողոքաբեր ընկերության ներկայացուցիչը մատնանշեց նաև այն փաստը, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիան (ԱԾ 097) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացել է 2014թ., այսինքն, վերջինիս մասնագիտական գործունեության ընդհանուր տևողությունը չի համապատասխանում Հրավերով սահմանված պահանջին:

Պատվիրատուի ներկայացուցիչն առարկեց բողոքաբերի հայտնած դիրքորոշմանը, նշելով, որ ծառայությունների ձեռքբերման ընթացակարգի հրավերի օրինակելի ձևով մասնակցից տեխնիկական բնութագրի պահանջ նախատեսված չէ, ուստի այն կդիտարկվեր որպես գործող օրենսդրության խախտում և հրավերի պահանջների շրջանցում: Ըստ Պատվիրատուի ներկայացուցչի, ի տարբերություն ապրանքների գնման դեպքերի, ծառայությունների գնման դեպքում մասնակիցը հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է դիմում՝ Հավելված 5՝ հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի վերաբերյալ, ինչը և Հանձնաժողովի կողմից գնահատվել է Հրավերի պահանջներին համապատասխանող:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա

պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ (...) խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Կարգի 64-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝ հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների անունը, ազգանունը, որակավորումը, աշխատանքային փորձը,

գործատուի անվանումը, ժամանակահատվածը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը:

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, և այլն):

«ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հրավերի՝

• 2.5 կետի համաձայն՝ Մասնակցին ներկայացվող՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Օրենքի՝

• 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

• 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասինորոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

• 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

- 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը չի բավարարում նույն հոդվածի պահանջները, ապա բողոքն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում խորհուրդն այդ մասին գրավոր տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու երկու աշխատանքային օր ժամկետ: Ընդ որում, եթե նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացված բողոքը չի բավարարել սույն հոդվածի պահանջները, ապա նույն մասով սահմանված ժամկետում շտկված և խորհուրդ ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի համաձայն՝ եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

Նույն օրենքի 84-րդ հոդվածի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը: Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի հիմնարկում կամ կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ կազմակերպությունում կամ հիմնարկում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները:

Խորհուրդն արձանագրում է, որ «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է 27.12.2017թ., այսինքն, անգործության ժամկետ է հանդիսանում 01.01.2018թ. ներառյալ:

Խորհուրդը գտնում է, որ «ԵՊՀ» հիմնադրամի և «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի միջև «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» ծածկագրով աուդիտորկան ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը Օրենքով սահմանված կարգով կարող էր կնքվել ոչ շուտ, քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան՝ 08.01.2018թ.-ին հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, այսինքն, ոչ շուտ,քան 10.01.2018թ., մինչդեռ վերը նշված պայմանագիրը կողմերի միջև կնքվել է 08.01.2018թ.-ին:

Հաշվի առնելով վերը նշված փաստական հանգամանքները, ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով և 36-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ Խորհուրդը գտնում է, որ «ԵՊՀ» հիմնադրամի և «Ասատրյանս» ՍՊԸ-ի միջև 08.01.2018թ կնքված «ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/129» ծածկագրով աուդիտորկան ծառայությունների գնման պայմանագիրն առ ոչինչ է:

Խորհուրդը հարկ է համարում նշել նաև, որ Հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 Հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրում Պատվիրատուն պետք է նկարագրեր ծեռք բերվող ծառայությունների նկարագիրը, այլ ոչ թե մասնակցին ներկայացվող «Աշխատանքային ռեսուրսներ» կամ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշիներին վերաբերող տվյալներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Աուդիտ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Դադարեցնել Հանձնաժողովի՝ ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/29 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**